ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«ՇԻՐԱԿԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ « Համակարգչային կախվածությունը կրտսեր դպրոցական տարիքում»

Կատարող՝ Կարինե Ռաֆիկի Պապիկյան

ՀՀ Շիրակի մարզի « Գյումրու N38 հիմն. դպրոց» դասվար

Ղեկավար՝ Կարինե Ալեքսանյան

Գյումրի 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

Գլուխ 1. Համակարգչային կախվածությունը կրտսեր դպրոցական տարիքում և դրա ազդեցությունը

1.1 Համակարգչային տեխնոլոգիաների բացասական ազդեցությունները կրտսեր դպրոցականների վրա 5

1.2 Կրտսեր դպրոցականի աշխարհաճանաչողության խթանումը, աշխատունակության բարձրացումն ու հետաքրքրությունների բավարարումը համակարգչային տեխնոլոգիաների օգնությամբ 11

Գլուխ 2. Դասավանդման իմ փորձից.....14

Եզրակացություն.....16

Օգտագործված գրականության ցանկ 17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նպատակը և խնդիրները

«Ինչ ազդեցություն է ունենում համակարգչային կախվածությունը կրտսեր դպրոցական տարիքում»:

«Համակարգիչը կատարում է մեր պատվերները, ոչ թե ցանկությունները»: Այսօրվա կյանքն անհնար է պատկերացնել առանց համակարգչի ու համացանցի: Այս տեխնոլոգիաները փոխել են բոլորիս՝ այդ թվում երեխաների կյանքը: Սակայն հարկ է արձանագրել, որ այդ նոր իրողությունն ունի երկու տեսակի ներգործում մասնավորապես կրտսեր դպրոցականների վրա: Մի կողմից համակարգչի և սմարթֆոնների կանոնավոր օգտագործումը խաղերի, սոցիալական ցանցերի, մուլտֆիլմերի դիտման համար կարող է առաջացնել համակարգչային կախվածություն, իսկ մյուս կողմից համացանցը բացում են բազմաթիվ հնարավորություններ՝ հարյուրավոր հավելվածներ, երաժշտություն, մուլտֆիլմեր, խաղեր, ուսումնական ծրագրեր երեխաների աշխարհաճանաչողությունը զարգացնելու համար: Անչափ դժվար է կրտսեր դպրոցականներին պաշտպանել համակարգչի բացասական ներգործությունից, սակայն դա օրապահանջ է: Այս պարագայում կարևոր է, որ սովորողն ինքը գա այն համոզմունքին, որ համացանցը կարելի է օգտագործել խելամտորեն և շահավետ, իսկ մեծահասակի դերն այստեղ կայանում է նրանում, որ վերջինս պետք է հետևողական լինի, որ անգամ շահավետ օգտակար օգտագործումը չվերածվի կախվածության: Այսպիսով, կարծում ենք, որ այս տարիքային խմբի սովորողների համար անչափ կարևոր է տեխնոլոգիական զարգացումը, համակարգչի կիրառության իմացությունը, սակայն այս ամենը պետք է իրականացվի մեծահասակի անմիջական թույլտվությամբ և վերահսկողությամբ, որպեսզի հնարավոր լինի հնարավոր բացասական ազդեցությունների բացահայտումն ու կանխումը՝ գործիքն օգտագործելով ի շահ սովորողի աշխարհաճանաչողության ու գիտելիքների ամբարման: Հետազոտության թեմայի արդիականությունը: Սույն հետազոտության արդիականության համար հիմք է հանդիսացել նոր տեխնոլոգիաների համատարած կիրառման պայմաններում սովորողներին ճիշտ ուղղորդելու, վերահսկելու անհրաժեշտությունը, որի հիմքում այն կործանիչ իրողությունն է, որ անվանվում է համակարգչային կախվածություն:

Հետազոտության նպատակը: Մեր նպատակն է ուսումնասիրել համակարգչային տեխնոլոգիաների ներգործությունը կրտսեր դպրոցական տարիքի սովորողների վրա՝ բացահայտելով դրա և' դրական, և' բացասական կողմերը:

Հետազոտության խնդիրը: Հետազոտության շրջանակներում մեզ համար որպես խնդիր ենք ձևակերպել. ցույց տալ համակարգչային տեխնոլոգիաների արդյունավետ կիրառման օրինակներ՝ նպատակ ունենալով հիմնավորել մեր այն պնդումը, որ տեխնոլոգիաները կարող են ունենալ նաև կրթական, դաստիարակչական և զարգացնող ներգործություն, իհարկե չբացառելով նաև բացասական ազդեցությունները:

Թեմայի արդիականությունը:

Այս ժամանակաշրջանի համար շատ արդիական թեմա է. Ըստ իս կարևոր է այս տարիքում ուսուցչի միջնորդությամբ և ճիշտ ուղղորդմամբ կանխել բացասական հետևանքները

Ո՞ր առանցքային կոմպետենցիային /կարողունակությանն/ է ուղղված նպատակի ուսումնասիրությունը

Թվային և մեդիա կարողունակություն

Վերապատրաստման ո՞ր թեմայի շրջանակում է անդրադարձ կատարվել այս հիմնախնդրին/ոլորտին

ՏՀՏ և մեդիագրագիտություն

ԳԼՈՒԽ 1. Համակարգչային կախվածությունը կրտսեր դպրոցական տարիքում եվ դրա ազդեցությունը

1.1 Համակարգչային տեխնոլոգիաների բացասական ազդեցությունները կրտսեր դպրոցականների վրա

Ժամանակակից աշխարհը թևակոխել է տեղեկատվական հասարակության զարգացման որակապես նոր փուլ: Տեղեկատվական տեխնոլոգիաների մուտքը կյանքի բոլոր բնագավառներ հանգեցրել է հասարակության կյանքի որակի արմատական փոփոխությունների: Համակարգչայնացումը դարձել է մեր հասարակության անբաժան մասը՝ իր հետ բերելով նաև մի շարք բացասական երևույթներ: Վերջինը հատկապես վերաբերում է համակարգչային խաղերին: Բոլորին ծանոթ է կախվածություն հասկացողությունը, որը հանգեցնում է հետևանքային մի շարք քայքայող իրավիճակների: Տարածված կախվածությունների շարքում կարելի է դիտարկել նաև համակարգչայինը, որն ունակ է կազմաքանդել անհատի կյանքը, նպատակները, մղումներն ու արժեքային համակարգը: Այստեղ թիրախային են հատկապես երեխաները, որոնց մոտ ևս շատ հաճախ է հանդիպում այս ախտանիշը, ինչը, կարծում ենք, կործանարար է այս տարիքային խմբի վրա՝ հաշվի առնելով վերջիններիս առանձնահատկությունները: Այս երևույթը, աստիճանաբար ձևավորվելով, կարող է դառնալ վիրտուալ հիվանդություն, ինչը երեխաների դեպքում առավել բարդ է վերահսկել ու կանխել: Երեխաների դեպքում կախվածությունն ավելի վառ է արտահայտված, իսկ առողջության վատթարացումը ամենավտանգավոր վերջնարդյունքն է:

Ներկայումս տարածված են «ինտերնետային կախվածություն», «համակարգչային-խաղային կախվածություն» եզրույթները, սակայն դրան զուգահեռ կիրառվում են նաև այլ հասկացություններ, օրինակ՝ ինտերնետի խնդրահարույց օգտագործում, ինտերնետի չարաշահում, ինտերնետային վարք, վիրտուալ կախվածություն, ինտերնետային կոմպուլսիվ վարքագիծ և այլն: Համացանցային հաղորդակցությանը հատուկ հնարավորությունները առցանց շփվողներին թույլ են տալիս սոցիալական առումով ավելի հաջողակ լինել առցանց ռեժիմում, քան առերես շփման ժամանակ: Խնդիրը պետք է դիտարկել հենց այս տեսանկյունից: Այստեղ է, որ դպրոցականը կարողանում է բավարարել իր ցանկությունները, հետաքրքրությունները, դառնալ հայտնի, ամենակարող, հաղթող, իսկ արդյունքում տուժում է նրա վարքը, սահմանափակվում է ակտիվ շարժողականությունը,

կաղապարվում է ճիշտ ուղղությամբ զարգանալու, գիտելիք ու կարողունակություններ ստանալու հնարավորությունը: Այսօր նախադպրոցական և կրտսեր դպրոցական երեխաների հիմնական մասը, որպես կանոն, սահմանված ժամանակից ավելի շատ է տրամադրում համակարգչին և համակարգչային խաղերին: Այս գործընթացն, անշուշտ, վերջիններիս դարձնում է դժվար կառավարելի՝ բերելով մի շարք բացասական հետևանքների, որոնցից են.

❖ Հրաժարվում է տնային և դպրոցական պարտականություններից՝ հավաքել ննջասենյակը, դասավորել պահարանը, սովորել դասերը, ինքնուրույն կատարել տնային աշխատանքը և այլն:

❖ Երեխան համակարգչի դիմաց նստելը գերադասում է ցանկացած շփումից, ընտանեկան տոնակատարություններից և հասակակիցների հետ խաղերից:

❖ Չափից շատ ակտիվ է սոցիալական էջերում և կարող է ենթարկվել կիբեռ հարձակման

❖ Ինտերնետային կայքերում անընդհատ ձեռք է բերում անհայտ ծագման նոր ընկերներ:

❖ Նկատվում է համակարգչի բացասական ազդեցությունը ուսումնական առաջադիմության, ուշադրության, կենտրոնացվածության վրա:

❖ Ինտերնետային կապի բացակայության դեպքում դառնում են ավելի դյուրագրգիռ և ագրեսիվ:

❖ Նկատվում է ուրիշ գործով զբաղվելու ցանկության անկում:

Նմանօրինակ երևույթների առկայությունը գալիս է փաստելու, որ երեխան ունի լուրջ խնդիրներ՝ կապված համակարգչային կախվածության հետ: Սա բացասաբար կարող է ազդել նաև երեխայի ֆիզիոլոգիական զարգացման վրա: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կրտսեր դպրոցական տարիքի երեխաները գտնվում են դեռևս ֆիզիոլոգիական աճի շրջանում, նրանց մոտ կարող են առաջանալ մի շարք խանգարումներ, նաև հիվանդություններ, որոնցից են.

- մկանային թուլություն,
- ներքին օրգանների զարգացման արատներ,
- սկոլիոզ,
- նյարդային խանգարումներ
- ախորժակի խանգարում

- տեսողության խանգարում
- գլխացավ, գլխապտույտ:

Այս ամենը հիմնականում տեղի է ունենում ամենաթողությունից, երբ մեծահասակները չեն վերահսկում երեխայի կողմից համակարգչի կամ այլ տեխնիկայի օգտագործումը, չեն սահմանում վերջինիս համար հստակ օրվա ռեժիմ: Միևնույն դիրքում երկար ժամանակ նստելիս մեջքի մկանները լարվում են, տեղի է ունենում արյան հոսքի կանգ և, որպես [1]հետևանք, առաջանում է այտուցվածություն ու ցավ: Սա անչափ վտանգավոր է երեխաների համար, ուստի այս խնդիրը որևէ կերպ չի կարելի անտեսել: Խոսելով համակարգչային կախվածությունից՝ արձանագրենք որ դրա մեկ այլ բացասական կողմն էլ ուսումնական գործընթացին խանգարելու հավանականությունն է: Մուլտֆիլմեր, զանազան բովանդակության շարժուն խաղեր, երեխայի համար դժվար է այս ամենից հրաժարվել ու կատարել դպրոցականի իր պարտականությունները: Սա իրականում բավականին դժվար ու զգայուն փուլ է, որն իրապես մեծ ուշադրության է արժանի: Դպրոցական կյանքի ոլորտ մուտք գործելու սկզբնական շրջանում երեխայի հոգեկանը լուրջ փոփոխություններ է կրում: Նա ձեռք է բերում կյանքի նոր ռեժիմի հետ կապված կարևոր սովորություններ և փոխադարձ վստահության վրա հիմնված հարաբերություններ է հաստատում ուսուցիչների ու ընկերների հետ: Ուսումնական նյութի նկատմամբ առաջ եկած հետաքրքրությունների հիման վրա նրանում դրական վերաբերմունք է ձևավորվում ուսուցման նկատմամբ: Այս տեսանկյունից կարևոր է ծնող-ուսուցիչ համագործակցությունը: Եթե ուսուցիչը դաստիարակում է բարձր արժեքներ՝ այդ թվում ցույց տալով, որ հաճախակի համացանցում ժամանակի անցկացումը վնասակար է, իսկ ծնողն ուղղակի թույլ է տալիս, սովորողի մոտ ձևավորվում է խոսքի թերարժեքություն և ամենաթողության զգացողություն: Ուստի, նա ընտրում է զվարճանքն ու խաղը: Նման սցենարները բացառված չեն՝ հաշվի առնելով ծնողի անգիտությունը կամ զբաղվածությունը, սակայն խիստ դատապարտելի են: Բացի դա, կարծում ենք, որ դասի ընթացքը տարրական օղակում պետք է լինի ակտիվ, աշակերտակենտրոն, հագեցած նոր տեխնոլոգիաներով, որպեսզի սովորողն այստեղ գտնի իր հետաքրքրություններն ու բավարարի շփվելու, խոսելու արտահայտվելու իր պահանջմունքը: Այս պարագայում սովորողների հետաքրքրությունների

[1] http://ijevanlib.ysu.am/wp-content/uploads/2017/12/tariqayin_ev_mankavarjakan_hogebanutyun.pdf Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, Երևան 1977, էջ 93:

ուսումնասիրությունը, ժամանակին ստեղծված հետադարձ կապը, թույլ կտա հստակեցնել սովորողի համար գերակա արժեքներն ու կողմնորոշել դրանք դեպի բնականոն զարգացում: Ուսուցիչը պետք է համացանցը ճիշտ օգտագործելու համար սովորողներին ուղղորդի նախագծերի կամ սոցիալական աշխատանքների ստեղծման ուղղությամբ,որոնք ներբեռնելով համացանց՝ կհամախմբեն այլ մարդկանց՝ դրական նպատակների և գործողությունների իրականացման համար:

Որպես կանոն, երեխայի ուշադրությունը գրավում են տեղեկատվության այնպիսի տեսակները, որոնք նա չի կարող հայթայթել ծնողների կամ ուսուցիչների միջոցով: Անբարոյականությունը, որը հեշտ հասանելի է համացանցում, ամուր և խորը կարող է նստել երեխայի գիտակցության մեջ: Որոշ գիտնականներ պնդում են, որ <<համացանցային կախվածության» հետևանքով վերջին տարիներին կտրուկ սկսել է նվազել գրագիտության աստիճանը, երեխաների մոտ առաջացել է էկրանային տեսողություն և համակարգչային մտածողություն: Երեխաների հետաքրքրությունները նեղացել են՝ սահմանափակվելով համակարգչային խաղերով, սոցիալական ցանցերով: Կորչում է շփման կարիքը. հարազատներն ու իրական ընկերները դառնում են պակաս անհրաժեշտ և կարևոր, քան սոցիալական ցանցերի վիրտուալ ընկերները և նրանց գնահատականները: Հեռուստատեսային դարաշրջանում մեծացած ծնողների համար, ներկա ինտերնետային սերնդի դաստիարակությունը նոր մարտահրավերներ է նետել:

Երեխաները նոր տեխնոլոգիաների մասին ավելին գիտեն, ուստի զարմանալի չէ, որ ծնողները հաճախ ոչ շահեկան վիճակում են երեխաների համեմատ: Քանի որ իսկապես վտանգներ կան, շատ կարևոր է ծնողների ներգրավումը երեխաների համացանցային կյանքի մեջ: Երեխաները կարող են շատ հմտորեն տիրապետել համակարգիչը, սակայն նրանք մեծահասակների կարիքն ունեն քննադատական մտածողություն ու դատողական հմտություններ տարբեր իրավիճակների համար զարգացնելու նոր ինֆորմացիայի և ցանցային շփումների ժամանակ[3]: Մեզանից շատերը չգիտեն, թե ինչպես են երեխաները համացանց օգտագործում, երբ բազում պատուհաններ են բացվում համակարգչի էկրանին և նրանց մատները սահում են ստեղնաշարի վրայով վտանգավոր արագությամբ: Այսպիսով, կարծում ենք, որ երախային այդուհանդերձ հնարավոր է զերծ պահել համակարգչային ազդեցության բացասական կողմից: Այս ուղղությամբ իր ուրույն դերակատարումն ունեն դպրոցն ու ընտանիքը: Հարկավոր է վերահսկել սովորողի ամեն մի ազատ րոպեն, թույլ չտալ, որ ժամանակը ծախսվի անտեղի: Իհարկե, կարելի է և' խաղալ, և' մուլտֆիլմ դիտել,

սակայն այստեղ ամենակարևոր բաղադրիչը վերահսկողությունն է: Իր հերթին էլ ուսուցիչը շատ անելիք ունի այն առումով, որպեսզի կարողանա սովորողին բերել այն գիտակցմանը, [2] որ համացանցը սոսկ զվարճությունների հարթակ չէ, այլ դրա արդյունավետ օգտագործումը կարող է ձևավորել բարձր արժեքներ: Միևնույն ժամանակ համացանցն ունակ է սերմանել անթույլատրելի վարքագիծ ու գործողություններ: Կրթական տարբեր աստիճաններում սովորողն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան կառույցներ, այլ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստատեսություն, համացանցային լրատվական միջոցներ, մամուլ) միջոցով: Կինոն, թատրոնը, հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են աշակերտի անձի վրա ոչ միայն ինքնին՝ որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաև որոշակի տիպարների միջոցով, որոնք դրսևորվում են այդ «տեղեկատվական աղբյուրներից հոսող» հերոսների վարքագծում[4]: Ուսուցիչը, պայմանավորված տեղեկատվական հոսքերի ակտիվությամբ, ունի նաև այլ տեսակի առաքելություն: Պետք է անպայման սովորողին փորձի զերծ պահել վտանգավոր ու կործանիչ համացանցային հարթակներից՝ շատ դեպքերում ուղիղ ցույց տալով դրանց վնասակար ազդեցությունները մարդու կյանքի, անվտանգության վրա: Ուսուցիչը պետք է սովորողներին ուղղորդի կիբեռհետապնդման դեպքում՝ ապաակտիվացնել և փակել տվյալ սպառնացող աղբյուրի հետ հաղորդակցման աղբյուրը[5]: Կրթության նոր հայեցակարգի մշակման տեսանկյունները վերաբերում են ուսուցչի և աշակերտի փոխգործակցության ձևերին, սովորողի արժեքային համակարգի ձևավորմանը, նրա իրականացման միջոցներին և եղանակներին: Ուսուցման ավանդական համակարգում առկա են ոչ միայն առարկայական, մանկավարժամեթոդական, այլև դաստիարակչական հիմնախնդիրներ, որոնց անդրադարձել են նշանավոր մանկավարժներ, փիլիսոփաներ, հոգեբաններ, և որոնք տակավին լուծված չեն: Խոսելով դաստիարակչական

2. https://old-lib.armedu.am/resource/27157 Կիբեռանվտանգության կանոններ ծնողների և ուսուցիչների համար, Անահիտ Պարզյան, Հայկական կրթական միջավայր, պաշարների շտեմարան: 3. http://safe.am/ar/internet.html /Ուսուցողական կայք, «Ապահով Համացանց Հայաստա»/

հիմնախնդիրների մասին՝ նշենք, որ ներկայումս դրանք առավել սուր բնույթ են կրում: Դա պայմանավորված է նրանով, որ ժամանակակից պայմաններում երեխայի մանկությունն [3]ընթանում է այնպիսի սոցիումում, որին բնորոշ են արժեքային սնանկությունը, հստակ նպատակային կողմնորոշիչների բացակայությունը, սոցիալական շերտավորումների խորացումը, մանկական և պատանեկան միջավայրերում ձևավորվող կոնֆլիկտները, ընտանեկան դաստիարակության բացթողումները[6]: Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ հասարակության կորիզը առողջ, արժեհամակարգ ունեցող, մարդասեր ու կառուցողական քաղաքացին է: Համացանցի սխալ օգտագործումը կարող է այդ նպատակին հասնելու համար հանդիսանալ լրջագույն խնդիր, ուստի կարևոր է ժամանակին արձանագրել ու լուծել այն:

[4] https://vsu.am/grqer/2017/aprak/paremuzyaninna.pdf Ի. Փարեմուզյան, «Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հանրակրթական ուսումնական հաստատությունում», էջ 397:
[5] https://old-lib.armedu.am/resource/27157 Կիբեռանվտանգության կանոններ ծնողների և ուսուցիչների համար, Անահիտ Պարզյան, Հայկական կրթական միջավայր, պաշարների շտեմարան/:

1.2 Կրտսեր դպրոցականի աշխարհաճանաչողության խթանումը, աշխատունակության բարձրացումն ու հետաքրքրությունների բավարարումը համակարգչային տեխնոլոգիաների օգնությամբ

Ժամանակակից երեխան արդեն ավանդական դարձած ռադիոյի, հեռուստացույցի կողքին ունի համակարգիչ՝ կառավարման համակարգերով և պատկերային միջոցներով օժտված բազմաֆունկցիոնալ ընկեր: Համակարգիչն ու համացանցը թե' երեխայի ընկերներն են թե' ուսուցիչները, թե' համերգասրահն ու պատկերասրահը, թե' գիրքը, մի խոսքով՝ այստեղ կա ամեն ինչ զարգանալու համար:

Հենց այս է պատճառը, որ տեխնոլոգիական այս բացահայտումը սկսեց ազդել նաև կրթական համակարգի և դրա իրականացման ձևերի վրա ևս: Այն քիչ-քիչ փոխեց ավանդական պատկերացումները կրթության ու զարգացման մասին: Կարող ենք ասել, որ կրթության ոլորտում այդ միջոցների օգտագործումը կարող է շատ լավ արդյունքներ ունենալ: Շատ գործիքներ կան, որոնք դյուրացնում և արագացնում են ուսումնառության գործընթացը ՝ հեշտացնելով ուսուցչի աշխատանքն ու ապահովելով դասի պատկերավոր ու նկարագրական լինելը: Այս տեխնոլոգիաների կիրառումը ուսումնական պրոցեսում ևս պիտի հաշվարկված լինի: Ուսուցիչը պետք է գնահատի դրա արդյունավետությունն ու ապա նոր միայն կիրառի գործիքը: Մի բան պարզ է, որ այս ամենը հետաքրքիր է մերօրյա սովորողներին, քանի որ դասի մեջ կա դինամիկա: Ավելի արդյունավետ է ՏՀՏ գործիքների համադրումը փոխգործուն մեթոդների հետ: Այս պարագայում սովորողը ամբողջապես իր ափսեի մեջ է: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի: Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի [4] ընտրության միջոցով առավել արդյունավետ է դարձնում աշակերտների կրթական խնդիրների լուծումը:

Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստականությունը դժվարությունները հաղթահարելու գործում, ձևավորվում են համառության, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ:

Կրթության արդիականացման ռազմավարությունը շեշտում է բոլոր մակարդակներում ուսուցման մեթոդներն ու տեխնոլոգիաները փոխելու անհրաժեշտությունը: Սովորողին հնարավորություն է տրվում տեղեկատվություն հավաքել, վերլուծել, հետազոտել, կատարել տնային առաջադրանքներ գրաֆիկական պատկերի, տեսասահիկի կամ ճանաչողական հոլովակի տեսքով: Սա զարգացնում է սովորողի ինքնուրույնությունը, ստեղծագործականությունն ու մետաճանաչողականությունը: Սովորողը այս տեխնոլոգիաների շնորհիվ հնարավորություն է ստանում գրքային գիտելիքից բացի ստանալ ավելի լայն հնարավորություններ, այդ թվում՝ սեփական հմտություններն ու կարողությունները այլընտրանքային միջավայրում իրացնելու: Կրտսեր դպրոցականը դառնում է ակտիվ մասնակիցը ուսուցման գործընթացում, իսկ ուսուցիչը՝ հանդես է գալիս որպես օգնական, խորհրդատու, խրախուսում անհատականությունը, ինքնատիպությունը, նախաձեռնությունն ու անկախությունը: Նյութի մատուցումը ՏՀՏ տեխնոլոգիաների միջոցով ավելի էմոցիոնալ, մատչելի և գրավիչ է դարձնում նյութը, իսկ աշակերտին տալիս է կառավարելու և ինքնակառավարվելու հմտություն:

Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը ուսումնական գործընթացում լրացուցիչ հնարավորություն է սովորողների ուսուցման որակը բարելավելու համար: Այդ տեխնոլոգիաները և կրթական առցանց հարթակները կարող են ուսուցչին օգնել ավելի արդյունավետ լուծել հետևյալ խնդիրները.

- սովորողների ինքնուրույնության խթանում, աջակցություն նրանց անհատականության զարգացմանը,
- անհրաժեշտության դեպքում հեռավար կրթության կազմակերպում,
- սովորողների կրթական կարիքների առավելագույն բավարարում,

 գիտելիքի անկախ ձեռքբերման և փոխանցման գործընթացի արդյունավետության բարձրացում,

 սովորողների ՏՀՏ կարողությունների ձևավորում,

 ուսումնական գործընթացում ՏՀՏ-ի օգտագործման տեխնոլոգիաների կատարելագործում,

 սովորողների պատկերավոր մտածողության զարգացում,

 մեդիագրագիտություն, համացանցից օգտվելու կանոնների յուրացում:

Այսպիսով, ՏՀՏ-ի կիրառումը տարրական դպրոցի կրթական գործընթացում կարող է նպաստել տեսական մտածողության զարգացմանը, և բարելավել կրթական գործընթացի արդյունավետությունը: Միևնույն ժամանակ սովորողը պետք է անպայման վերահսկվի այս հարթակում գործունեություն ծավալելիս: Մեծերի գերխնդիրն է ապահովել այնպիսի բարոյահոգեբանական միջավայր, որպեսզի սովորողն անկաշկանդ կիսվի իր հետաքրքրություններով, չգնա ծածուկ քայլերի, որոնք կարող են անդառնալի հետևանքներ առաջացնել:

Գլուխ 2. Դասավանդման իմ փորձից

Որպեսզի պարզենք, թե դասարանում սովորողների շրջանում նմանօրինակ խնդիրներ ունենք, թե ոչ, դասղեկական ժամին սովորողներին բաժանեցինք հարցաթերթիկներ, որոնք թույլ կտան մեզ տեսնել իրական պատկերը:

Հարցաթերթիկների բովանդակությունը.

1. Ունե՞ս համակարգիչ կամ հեռախոս:

□ այո □ ոչ

2. Կարո՞ղ ես ինքնուրույն տեղեկատվություն փնտրել համացանցում:

□ այո □ ոչ □երբեմն

3. Ի՞նչ տեսահոլովակներ ես դիտում հաճախ:

□ֆիլմեր □մուլտֆիլմեր □տարբեր

4. Օրվա ընթացքում քա՞նի ժամ ես տրամադրում համացանցում մուլտֆիլմ կամ հոլովակ դիտելուն:

□1ժամ □3ժամ □կախված դիտելու նյութից

5. Համացանցում խաղեր խաղու՞մ ես:

□ այո □ ոչ

6. Ինչպիսի՞ խաղեր ես խաղում:

_____

7. Ի՞նչ է սոցիալական ցանցը:

_____

8. Սոցիալական ցանց մուտք գործելիս, ինչո՞վ ես զբաղվում:

_____

9. Մայրիկդ քեզ թույլ տալի՞ս է հաճախ մտնել համացանց:

□ այո □ ոչ □երբեմն

10. Եթե համացանցը անջատվում է, ի՞նչ ես անում:

_____

11. Համացանցը քեզ օգնու՞մ է պատրաստել դասերդ:

□ այո □ ոչ □երբեմն

Հարցման մասնակիցները 3-րդ դասարանի 27 սովորողներ էին, որոնց պատասխաններից ստացանք հետևյալ արդյունքը:

Հարցվածների հիմնական մասը քաջատեղյակ է համացանց մուտք գործելու և որոշակի գործողություններ անելու սկզբունքներին: Սովորողներից 7 հոգի, չունի համակարգիչ կամ հեռախոս և օգտվում է մայրիկի հեռախոսից: Սովորողների մեծամասնության պատասխանները մտահոգիչ էին: Նրանք բավականին երկար ժամանակ են ծախսում համացանցում խաղեր խաղալու, մուլտֆիլմ դիտելու վրա: Իսկ ահա 9 սովորող նշել էին, որ համացանցն օգնում է իրենց տնային առաջադրանքները կատարելիս: Ինչ վերաբերվում է սոցիալական ցանցերին, ապա նշենք, որ դրական պատասխանը 22 էր: Ստացվում է, որ 22 սովորող ամեն օր մուտք է գործում սոցիալական ցանց, որտեղ հիմնականում կարելի է հանդիպել չափահասների համար նախատեսված կոնտենտի: Մեր հետազոտության արդյունքները կոնկրետացնենք ստորև:

<u>Համակարգչային տեխնոլոգիաների կիրառումը 3-րդ դասարանում.</u>

- Կախվածություն ունեն՝ 15 աշակերտ
- Ծնողը վերահսկում է՝ 5 աշակերտ
- Հազվադեպ են օգտագործում՝ 4 աշակերտ
- Առհասարակ չի օգտվում՝ 3

Եզրակացություն

Ուսումնասիրության արդյունքում հանգեցինք հետևյալ եզրահանգումներին՝

- Ուսումնական գործընթացի արդյունավետությունը մեծապես կախված է ուսուցչի մոտեցումներից, սեփական պարտականությունները գիտակցելուց և պատշաճ կատարումից:
- Ուսուցիչը պետք է ուղղորդի սովորողին, որպեսզի վերջինս ճիշտ կողմնորոշվի համացանցում:
- Պետք է սովորողին պաշտպանել կիբեռհարձակումից:
- Հարկավոր է դրական օրինակի օգնությամբ սովորողի մոտ բարձր արժեքներ ձևավորել, ցույց տալ համակարգչի կրթող ու զարգացնող գործառույթը:
- Ուսուցիչը պետք է անդադար կատարելագործի իր մանկավարժական հմտությունները, կիրառի նոր մեթոդական հնարներ, վստահելի հարաբերություններ ձևավորի սովորողների հետ:
- Ժամանակի մարտահրավերներով պայմանավորված՝ ուսուցիչը պետք է ուսուցման նպատակների մեջ անպայման ունենա սովորել սովորոցնելով հասկացությունը:
- Հետադարձ կապը պետք է ուսուցչի համար դառնա ուսումնական գործընթացը մշտադիտարկելու և համակարգելու գործիք:
- Սովորողի համար պետք է ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ նա իրեն պահանջված ու կարևոր կզգա և բաց կլինի համագործակցության ու կարծիքների փոխանակման համար:
- Ուսուցիչը պետք է ամեն կերպ փորձի համակարգչային կախվածությունից զերծ պահել սովորողին՝ մշտադիտարկումներ իրականացնելով:

Առաջարկություններ - Կցանկանայի ավելացնել, որ սույն աշխատանքը մեծ չափով կօգնի մեզ մեր մանկավարժական հետագա գործունեության ընթացքում, որպեսզի էլ ավելի կառուցողական մոտենանք կրտսեր դպրոցականների կարիքների գնահատմանը՝ այդ թվում պարզելու վերջիններիս մոտ համակարգչային հնարավոր կախվածության առկայությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. https://vsu.am/grqer/2017/aprak/paremuzyaninna.pdf Ի. Փարեմուզյան, «Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հանրակրթական ուսումնական հաստատությունում»:

2. https://old-lib.armedu.am/resource/27157 Կիբեռանվտանգության կանոններ ծնողների և ուսուցիչների համար, Անահիտ Պարզյան, Հայկական կրթական միջավայր, պաշարների շտեմարան:

3. http://ijevanlib.ysu.am/wpcontent/uploads/2017/12/tariqayin_ev_mankavarjakan_hogebanutyun.pdf Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, Երևան:

4. http://safe.am/ar/internet.html /Ուսուցողական կայք, «Ապահով Համացանց Հայաստան»/:

5. Ա. Մ. Զաղոյան Խորհրդատվության դաստիարակչական դերը սովորողների պահվածքի ձևավորման գործում, Երևան, 2014: